

## **ՀՀ ֆինանսների նախարարություն**

### **Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 7/6**

**24 փետրվարի 2015 թ.**

Քննարկվեց «Հեքիաթ և Հերարմ» ԱԿ 11.02.2015 թ-ի դիմումը ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 18.10.2013 թ-ի թիվ 51/1 որոշմամբ կասեցված վարույթը վերսկսելու և որոշում կայացնելու վերաբերյալ:

#### **«Հեքիաթ և Հերարմ» ԱԿ դիմումում բերված փաստարկները.**

ՀՀ ԿԱ նախկին ՊԵԿ /ներկայումս՝ ՀՀ ֆինանսների նախարարության/ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի /հետայսու՝ Հանձնաժողով/ քննության վարույթում է գտնվում «Հեքիաթ և Հերարմ» ԱԿ-ի 30.09.2013 թ-ին վերադասության կարգով բերված բողոքը ՀՀ ԿԱ նախկին ՊԵԿ Իջևանի ՏՀՏ-ի 26.09.2013թ.-ի թիվ 1009029 ստուգման ակտի դեմ:

Հիշյալ բողոքով, ԱԿ-ին հայտնի վերջին գործողությունը, որը կատարվել է Հանձնաժողովի կողմից, դա Հանձնաժողովի 18.10.2013թ.-ի թիվ 51/1 որոշմամբ բողոքով հարուցված վարչական վարույթի կասեցումն է:

Վարույթի կասեցման համար հիմք է հանդիսացել ՀՀ ԿԱ նախկին ՊԵԿ հետաքննության մարմնում «Հեքիաթ և Հերարմ» ԱԿ-ի պաշտոնատար անձանց նկատմամբ քրեական գործի հարուցման հարցի շուրջ նյութերի նախապատրաստման հանգամանքը:

Հայտնվում է, որ վերոհիշյալ նախապատրաստված նյութերով ՀՀ ԿԱ նախկին ՊԵԿ քննչական վարչության կողմից 03.02.2014թ.-ին կայացվել է որոշում թիվ 83179113 քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին:

Նկատի ունենալով այն փաստը, որ վերացել է բողոքի քննության կասեցման համար հիմք հանդասացած հանգամանքները, ուստի ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասով դիմումատուն խնդրում է կայացնել որոշում ՀՀ ԿԱ նախկին ՊԵԿ Իջևանի ՏՀՏ-ի 26.09.2013թ.-ի թիվ 1009029 ստուգման ակտի դեմ «Հեքիաթ և Հերարմ» ԱԿ-ի 30.09.2013թ-ին վերադասության կարգով բերված բողոքի քննությունը վերսկսելու մասին և նշանակել բողոքի քննության օր:

#### **ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով)՝ ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները, եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի 18.10.2013 թ-ի նիստում քննության է առնվել «Հեքիաթ և Հերարմ» ԱԿ 30.09.2013 թ-ի գրությամբ բերված գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Իջևանի ՏՀՏ 26.09.2013 թ-ի թիվ 1009029 ստուգման ակտի դեմ: Արդյունքում ընդունվել է թիվ 51/1 որոշումը, որի համաձայն գանգատի հիման վրա

հարուցված վարչական վարույթը կասեցվել է, քանի որ ՀՀ ԿԱ ՊԵԿ հետաքննության մարմնում նյութեր են նախապատրաստվել «Հեքիաթ և Հերարմ» ԱԿ (այսուհետ նաև կազմակերպություն) պաշտոնատար անձանց նկատմամբ քրեական գործի հարուցման հարցը պարզելու նպատակով:

Տվյալ դեպքում հաշվի առնելով, որ նախապատրաստված նյութերով ՀՀ ԿԱ ՊԵԿ քննչական վարչության 03.02.2014թ.-ին կայացվել է որոշում թիվ 83179113 քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին, ինչպես նաև հիմք կազմակերպության 11.02.2015 թ-ի դիմումով բերված միջնորդությունը, Հանձնաժողովը վերսկսում է 18.10.2013 թ-ի թիվ 51/13 որոշմամբ կասեցված վարույթը՝ գանգառի վերաբերյալ ըստ էության որոշում կայացնելու համար:

Նշվեց նաև, որ համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 13.08.2013 թ-ի թիվ 1009029 հանձնարարագրի «Հեքիաթ և Հերարմ» ԱԿ-ում իրականացվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Իջևանի ՏՀՏ 26.09.2013 թ-ի թիվ 1009029 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 16.860.033 դրամ:

Նիստին ներկա գտնվող «Հեքիաթ և Հերարմ» ԱԿ նախագահը նշեց, որ կազմակերպության գանգառը վերաբերվում է ստուգվող ժամանակաշրջանում դուրս գրված և (կամ) մատակարարներից ստացված հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկանքը սահմանված կարգով չներկայացնելու համար ստուգման ակտով ԱԱՀ-ի գծով առաջադրված լրացուցիչ պարտավորությանը:

Այսպես, ստուգման ակտի 5-րդ կետով արձանագրվել է, որ ստուգվող ժամանակաշրջանում կազմակերպության կողմից սահմանված կարգով չեն ներկայացվել թվով 12 հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկանքներ հաշվետու ժամանակաշրջանում ձեռք բերած ապրանքների և ստացված ծառայությունների դիմաց մատակարարների դուրս գրած հարկային հաշիվների և մատակարարած ապրանքների և մատուցված ծառայությունների գծով դուրս գրված (գնորդներին տրված) հարկային հաշիվների վերաբերյալ: Մասնավորապես, կազմակերպության կողմից մատակարարներից ստացված թվով 12 հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկություններ չեն ներկայացվել, որի հետևանքով 2012 թ-ի 3-րդ եռամսյակի համար ներկայացված ավելացված արժեքի հարկի հաշվարկում ԱԱՀ-ն ավել է դեբետագրվել 3.787.097 դրամի չափով, իսկ 2012 թ-ի 4-րդ եռամսյակի համար ներկայացված ավելացված արժեքի հարկի հաշվարկում՝ 3.002.391 դրամի չափով: Բացի այդ, 2012 թ-ի 2-րդ եռամսյակի համար դուրս գրված և (կամ) մատակարարներից ստացված հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկանքը 2012 թ-ի 3-րդ եռամսյակում ներկայացնելու, սակայն դեբետագրման համապատասխան գումարը 2012 թ-ի 2-րդ եռամսյակի ԱԱՀ-ի հաշվարկում ներառելու հետևանքով 2012 թ-ի 2-րդ եռամսյակի ԱԱՀ-ի հաշվարկում դեբետագրման ենթակա ԱԱՀ-ն ավել է արտացոլվել 1.847.675 դրամի չափով: Արդյունքում, նշված գումարի չափով ավելացվել է 3-րդ եռամսյակի համար ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկում արտացոլված դեբետագրման ենթակա ԱԱՀ-ն:

13.12.2012 թ-ին դուրս գրված հարկային հաշիվի վերաբերյալ տեղեկությունը ներկայացվել է 04.03.2013 թ-ին: Հետևապես այդ հարկային հաշվում արտացոլված ԱԱՀ-ն՝ գումարով 70.867 դրամ, ենթակա էր հաշվանցման ոչ թե 2012 թ-ի 4-րդ

եռամսյակի, այլ 2013 թ-ի 1-ին եռամսյակի ԱԱՀ-ի հաշվարկով: Ինչպես նաև, 26.07.2012 թ-ին դուրս գրված հարկային հաշիվի վերաբերյալ տեղեկությունը ներկայացվել է 05.11.2012 թ-ին: Հետևապես այդ հարկային հաշվում արտացոլված ԱԱՀ-ն՝ գումարով 118.667 դրամ, ենթակա էր հաշվանցման ոչ թե 2012 թ-ի 3-րդ եռամսյակի, այլ 2012 թ-ի 4-րդ եռամսյակի ԱԱՀ-ի հաշվարկով:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է մեջբերել հետևյալ իրավանորմերի դրույթները:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի համաձայն. «Սույն օրենքի համաձայն՝ ԱԱՀ վճարող համարվող անձինք հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո՝ մինչև դրան հաջորդող ամսվա 20-ը (ներառյալ), Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով ներկայացնում են տեղեկանք հաշվետու ժամանակաշրջանում իրենց ձեռք բերած ապրանքների և ստացված ծառայությունների դիմաց մատակարարների դուրս գրած հարկային հաշիվների և իրենց մատակարարած ապրանքների և մատուցված ծառայությունների գծով դուրս գրված (գնորդներին տրված) հարկային հաշիվների վերաբերյալ»:

Իր հերթին, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի համաձայն. «Ձեռք բերված ապրանքների և ստացված ծառայությունների գծով մատակարարների կողմից դուրս գրված այն հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները, որոնց վերաբերյալ, սույն օրենքի 20 հոդվածին համապատասխան, հարկային մարմին տեղեկություններ (այդ թվում՝ ճշգրտված) չեն ներկայացվել կամ որոնց վերաբերյալ ներկայացված կամ չներկայացված տեղեկությունները չեն համապատասխանում հարկային հաշվում արտացոլված տվյալներին (վավերապայմաններին)՝ հաշվանցման ենթակա չեն: Ձեռք բերված ապրանքների և ստացված ծառայությունների գծով այն հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները, որոնք ներկայացվել են (ներառվել են տեղեկանքում) հարկային հաշիվի ստացմանը հաջորդող որևէ հաշվետու ժամանակաշրջանում, հաշվանցվում են տեղեկությունների ներկայացման ժամանակաշրջանի համար ներկայացվող ԱԱՀ-ի հաշվարկով»:

Քննարկվող դեպքում ստուգվող ժամանակաշրջանում «Հեքիաթ և Հերարմ» ԱԿ կողմից խախտվել են վերոգրյալ իրավանորմերի պահանջները, որի համար ստուգման ակտով կիրառվել են ՀՀ օրենսդրությամբ նախատեսված համապատասխան պատասխանատվության միջոցները:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո ռ ո շ ու մ է՝

1. ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի 18.10.2013 թ-ի թիվ 51/1 որոշմամբ կասեցված վարույթը վերսկսել:
2. ՀՀ ԿԱ ՊԵԿ Իջևանի ՏՀՏ 26.09.2013 թ-ի թիվ 1009029 ստուգման ակտը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Հանձնաժողովի նախագահ՝



*(Handwritten signature)*

Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ